Աշխատանքի ծածկագիր 1117

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի
մասնակցությամբ անդամներ՝
Հ.Պետրոսյանի
Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 2-րդ, 6-րդ, 7-րդ, 20-րդ, 32-րդ, 25-րդ, 37-րդ /բողոքում նշված է 28-րդ, որը Հանձնաժողովը դիտարկել է որպես վրիպակ/ հարցերը:

Քրեական դատավարության բաժին

Հարց 2

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ/-ն է, այն է՝ ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ, *քանի որ դատավորը դիրքորոշում է հայտնել առաջադրված մեղադրանքի վերաբերյալ:*

Հարց 7

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ համաներման հիմքով որոշում է կայացվել նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ/-ն, այն է՝* <<ա>>, <<բ>> և <<գ>> կետերում նշված դեպքերում, *քանի որ նշված բոլոր դեպքերում մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման:*

Հարց 20

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենսգրքով սահմանված պահանջներին, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ/-ն, այն է՝* ճիշտ պատասխանը բացակայում է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մեղադրական եզրակացությունը մեղադրողին վերադարձնելու ընթացակարգ չկա:

Հարց 32

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմանը:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 6

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ կոնկրետ բողոքի հանգամանքներով պայմանավորված իրավասու է կայացնել <<բ>> և <<գ>> կետերում նշված որոշումները, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ/-ն, այն է՝* բողոքը ճանաչելով հիմնավորված՝ որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, *քանի որ բ/ տարբերակում առկա որոշում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման բողոքարկման պարագայում Դատարանն իրավասու չէ կայացնել:*

Հարց 25

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ տեղանքի և շենքի զննության, մինչդեռ ճիշտ պատասխանն է

դ/-ն, այն է՝ ճիշտ պատասխանը բացակայում է, քանի որ նշված գործողությունը կատարելիս չի կազմվում առանձին արձանագրություն:

Հարց 37

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ եթե դատական քննության ընթացքում հայտնվում է ամբաստանյալը և ներյականում դատարան, մինչդեռ ճիշտ պատասխանն է դ/-ն, այն է՝ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են, քանի որ հավակնորդի կողմից նշված տարբերակը չի ներառում հեռակա կարգով վարույթը ընդհանուր կարգով շարունակելու բոլոր դեպքերը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ *1117* ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 32-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ